ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 20>> << հունվար >> 2017 թ N 13

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՐԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ « ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2)-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1)-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 34-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <<ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկ գյուղի միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2017 թվականի հունվարի 18-ի թիվ1 գրությունը և Կարապետ Ղազարյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2017 թվականի հունվարի 20-ից Կարապետ Ղազարյանին նշանակել <<ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկ գյուղի միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ